Աջարային միանալով՝ դնում են մեծացնելու Ճորոխի ջրերը։

Աջարա վտակի ակունքը Կեխեվենի եայլայից սկսելով՝ նախ ուղղւում է հարաւարեւմուտք, մինչեւ Բիկեթի գեղը. ձախից ընդունելով Բակսաձէ եայլա, Դանիս-Պարուլետի եւ աջից՝ Ցեղաջարա առուները. ապա ուղղւում է արեւմուտք հասնում է Բեգլետի գեղը, ձախից ընդունելով Դիակպիս կամ Դիակմիս, աջից՝ Կարտոխի առուները։ Այստեղից արեւմտահիւսիս է ուղղւում մինչեւ Դիդ-Աջարա աւանը, աջից ընդունելով Ցացիխուրի, Գուդասխեւի եւ Գորջոմի միացեալ եւ Դայիոնեսի, ձախից՝ Տագօ առուակները, որոնք բղխում են եւ իջնում Սակուլափերդի լ-ից. հիւսիսից եւ Արգիլոտի լ-ից հարաւից։

Դիդի-Աջարայից թեքւում է վտակը հարաւ-արեւմուտք, անցնում է Խուլա, Գորչմելիձէ, Ալմէ, Զաօ եւ Կեդլիբի գեղերը ոռոգելով՝ ընդունում է Սխալտա մեծ առուակը, որ իջնում է Արսիան լ-ից։ Սխալտան դէպի արեւմուտք եւ քիչ էլ հիւսիս թեքուած ընթանալով՝ ընդունում է աջից Բակօ (Վակա), Կարագեօլ առուակները, որոնք դուրս են գալիս համանուն լճակներից, ոռոգելով համանուն եւ Մումէուլի գեղերը իրենց պարագաներով։ Այդտեղ միանում է Թխիլվան առուակը համանուն գեղից։ Սխալտան աւելի առաջ գնալով՝